ԿԱՐԾԻՔ

Ի9.00.01 «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանը հայցող Հրաչյա Վաղարշակի Արզումանյանի «Քաղաքագիտական-աստվածաբանական տեղաշարժի հարացույցը ազգային անվտանգության տեսության զարգացման մեջ» (Парадигма политолого-теологического сдвига в развитии теории национальной безопасности) թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ժամանակակից պայմաններում, կրոնի և քաղաքականության բազմաստիճանությունը և բազմակողմանիությունը, կրոնաքաղաքական իրականության հայեցակարգերը, հասարակագետներից պահանջում են ցուցաբերել միջդիսցիպլինար մոտեցում՝ ինչպես տեսական մոդելավորման, այնպես էլ էմպիրիկ հետազոտության համար: Փիլիսոփայության, կրոնագիտության և քաղաքական գիտությունների շրջանակներում, մի կողմից, ձևավորվում է կրոնի և քաղաքականության՝ որպես սոցիալական հատուկ երևույթների փոխհարաբերությունների հայեցակարգ, իսկ մյուս կողմից՝ հասարակագիտական տեսությունները և հասկացությունները ներդաշնակեցվում են՝ նոր տեսական գիտելիքներ ձևավորելու համար:

Կրոնաքաղաքական փոխհարաբերությունների քաղաքագիտական ուսումնասիրությունները, որպես կանոն, ուղղված են կրոնի և քաղաքականության փոխհարաբերությունների բացահայտմանը և հիմնավորմանը: Այսինքն՝ այդպիսի հարաբերություններ, որոնց արդյունքը հասարակության քաղաքական համակարգի կայունությունն է և բազմաթիվ սոցիալ-քաղաքական հիմնախնդիրների լուծումը: Կրոնաքաղաքական հարաբերությունների համարժեքությունը, տվյալ հասարակության մեջ կրոնի և քաղաքականության դերի որոշումը պայմանավորված

է քաղաքակրթական, մշակութային և արժեքային մի շարք առանձնահատկություններով:

Կրոնի և քաղաքականության փոխազդեցության համակողմանի ուսումնասիրությունները լրացնում են հասարակագիտական հասկացությունների բովանդակությունը՝ նպաստելով այդ փոխազդեցության ընթացքում համարժեքորեն հասկանալու և իմաստավորելու բարդ երևույթներն ու գործընթացները: Թերևս, միջդիսցիպլինար մեթոդաբանությունը, որը կենտրոնացած է կրոնաքաղաքականության փոխգործակցության արդի միտումները հասկանալու վրա, կարող է ինտեգրման հիմք հանդիսանալ տարբեր տեսությունների ստեղծման համար: Դրոնք էլ արտացոլվում են կրոնաքաղաքական տարածության և ցանցային կառուցվածքի մեջ:

Ժամանակակից քաղաքակրթական երևույթների դասակարգումն ու համակարգումը կարևոր դեր է խաղում կրոնաքաղաքականության փոխազդեցությունների արդյունավետ կառավարման գործում՝ պահանջելով արդիականացման համար անհրաժեշտ մի շարք գաղափարների իրականացում: Կրոնի և քաղաքականության փոխգործակցության առարկայական օնտոլոգիան, իր հերթին, պահանջում է հանրային կառավարման օբյեկտների հայեցակարգային բովանդակության սահմանում: Քանզի, համակարգային օնտոլոգիան պետք է բացահայտվի կրոնաքաղաքական տարածության և ժամանակի, գործընթացների, գործառույթների և հարաբերությունների միջոցով:

Ներկայացված աշխատանքում Հ. Արզումանյանն ուսումնասիրել է հետևյալ հիմնահարցերը՝ քաղաքական և կրոնական հասկացությունների փոխհարաբերությունները կայացող անվտանգության միջավայրում, քաղաքական աստվածաբանության էվոլյուցիայի փուլերը և կատեգորիալ ապարատը, քաղաքական և կրոնական հայեցակարգերի փոխգործակցության հիմնախնդիրները: Այս համատեքստում հեղինակն ուշադրություն արժանացրել բարդ մտածողության և բարդության գիտության փիլիսոփայական

հիմնավորումներին՝ մեկնաբանելով բարդ հարմարվողական համակարգերի տեսության կիրառումը սոցիալական համակարգերում: Ընդ որում՝ բարդ մտածողության սկզբունքների, համակարգերի ընդհանուր տեսության և բարդ ադապտիվ համակարգերի տեսության հիման վրա, հեղինակը քննարկել է գծային և ապագծային հարացույցների կայացման և զարգացման հիմնական փուլերը, ինչպես նաև համաշխարհայնացման գործընթացները և ձևավորվող անվտանգության միջավայրի հիմնական ուրվագծերը: Ուշագրավ է, որ ապագծայնության հարացույցի և բարդ ադապտիվ համակարգերի տեսության հիմնարար դրույթների հիման վրա, հեղինակը քննարկել է նաև անվտանգության միջավայրում ընթացող որակական այն տեղաշարժերը, որոնք, հեղինակի կարծիքով՝ անհրաժեշտ են դարձնում հակամարտության ապագծային մոդելների և ռազմական ոլորտի վերափոխման հայեցակարգի մշակումները:

Սույն աշխատանքի ներածությունում հեղինակը ներկայացրել է թեմայի արդիականությունը, օբյեկտը և առարկան, նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը: Իսկ դոկտորական ատենախոսության եզրակացությունում հեղինակը շարադրել է հիմնական եզրահանգումները:

Հիմնվելով վերոհիշյալ մոտեցումների և պաշտպանության ներկայացված հիմնական դրույթների վրա՝ ցանկանում եմ ներկայացնել հետևյալ թերություններ.

1. Ուսումնասիրության թեման վերացական է և ընդհանրական, որն էլ խանգարել է հեղինակին քաղաքագիտական մոտեցումների հիման վրա կառուցակցել սեփական հետազոտական ծրագիրն ու այն համարժեքորեն իրականացնել: Դա նկատելի է ատենախոսության հիմնական նպատակի և այդ նպատակին հասնելու համար ներկայացված գիտական հիմնախնդիրների ձևակերպումներից, որոնցում անհասկանալի է քաղաքագիտական-աստվածաբանական տեղաշարժի հարացույցի տեղն ու դերը (տե՛ս էջ 10-12):

2. Վիճահարույց է ատենախոսության ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, ինչպես նաև դրանց ծավալային և իմաստային հարաբերակցությունը (տե՛ս էջ 9-10): Անհասկանալի է այն, թե ի՞նչ ի նկատի ունի հեղինակն ուսումնասիրության առարկայի ձևակեպումներում (տե՛ս էջ 9-10):
3. Ատենախոսության ներածության մեջ բացակայում է թեմայի գիտական մշակվածությունը, որոնցում պետք է արտացոլված լինեին հիմնական հետազոտություններն ու ատենախոսությունները:
4. Անհասկանալի է հեղինակի անձնական գիտական ներդրումը և նորույթը, ինչպես նաև այն, թե ինչպե՞ս և ո՞ր ենթագլխում է հեղինակը հիմնավորել դրանք (էջ 13-17):
5. Անհասկանալի է ատենախոսության թեմատիկ կառուցվածքն ու հաջորդականությունը, որովհետև, եթե 1-ին գլուխը համապատասխանում է ատենախոսության վերնագրին, ապա 2-րդ, 3-րդ և 4-րդ գլուխներն ու դրանց ենթավերագրերում քննարկվող հարցադրումներում նկատելի չէ քաղաքագիտական-աստվածաբանական տեղաշարժի հարացույցը:
6. Ատենախոսության 2-րդ, 3-րդ և 4-րդ գլուխներն ու դրանց ենթավերագրերում առկա նյութն առավելապես փիլիսոփայական է: Անհասկանալի են նաև, թե հեղինակը քաղաքագիտական ի՞նչ իմաստ և նշանակություն է տվել դրանց, ինչպես նաև այն, թե ինչու՞ է հեղինակն այդքան կենտրոնացել փիլիսոփայական մտքերի շուրջ (էջ 114-293):
7. Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակն ուսումնասիրեր կրոնաքաղաքական երևույթների ժամանակակից ձևերը, կրոնաքաղաքական փոխակերպումների միտումները և դրանց նոր տեսակները՝ հիմք ընդունելով Թ. Լուկմանի, Դ. Պոլլակի, Լ. Հալմանի և Օ. Ռիիսի ուսումնասիրությունները: Ակնհայտ է, որ ժամանակակից կրոնական «նորամուծությունները» և վերափոխումները հնարավոր չէ հասկանալ

աշխարհի քաղաքական պատկերից դուրս: Իսկ ներպետական քաղաքական իրադարձությունների համարժեք գնահատումն անհնար է՝ առանց հաշվի առնելու կրոնի աշխարհաքաղաքական ազդեցությունները ներպետական քաղաքական գործընթացների վրա: Նույնիսկ ժամանակակից «աշխարհիկացված» աշխարհի պայմաններում կրոնի և քաղաքականության փոխազդեցությունը ոչ միայն չի դադարել, այլև գտնում է երբևէ նոր ձևեր: Դրանցից մեկն է կրոնի արագ քաղաքականացումը: Այս գործընթացն ընդգրկեց նույնիսկ այն կրոնական դավանանքները, որոնք նախկինում «քաղաքականապես և ակտիվորեն խուսափում էին քաղաքականությունից»: Ահաբեկչությունը, պատերազմները և բազմաթիվ հակամարտություններ, որոնք տեղի են ունենում ժամանակակից աշխարհում, շատ հաճախ, ի թիվս այլոց, պարունակում են կրոնական հարթություն: Բացի այդ, կրոնական և քաղաքական գաղափարախոսությունները հաճախ էկլեկտիկ բնույթ են կրում, դրանք կարող են պարունակել այլ կրոնների կամ նույնիսկ աշխարհիկ գաղափարախոսությունների փոխառություններ:

8. Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակն ուշադրություն դարձներ նաև կրոնաքաղաքական փոխազդեցությունների էմպիրիկ փաստերին՝ կանխատեսելով դրանց զարգացման հնարավոր ուղիները, այլ ոչ թե կրոնաքաղաքականության բնույթին: Քանզի ակնհայտ է, որ կրոնի և քաղաքականության միջև զուգակշռված հարաբերությունները սոցիալական կայունության ոչ միակ, բայց կարևոր բաղադրիչներն են: Կարևոր է ամբողջական պատկերացում կազմել այն գործոնների և նախապայմանների մասին, որոնք անհրաժեշտ են և բավարար կրոնաքաղաքականության առավել կառուցողական փոխգործակցության համար: Ակնհայտ է, որ «համընդհանուր կրոն» գոյություն չունի, կան միայն կոնկրետ և առանձնահատուկ կրոններ, որոնք իրենց

պարամետրերն են սահմանում պաշտամունքի, հասարակական և քաղաքական գործունեության համար: Կրոնի և քաղաքականության փոխհարաբերությունների մասին խոսելը և հենց այդ պարամետրերը հաշվի չառնելը նշանակում է ոչինչ չասել այս հարաբերությունների իրական ձևերի, բովանդակության և հետևանքների մասին: Այս առումով ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակն օգտվեր հետևյալ վերլուծություններից՝ *Спиноза Б., Богословско-политический трактат. Харьков, 2001, Norris, P., Inglehart, R. Sacred and Secular. Religion and Politics Worldwide. Cambridge: Cambridge University Press, 2004, Eck, D. American Religious Pluralism: Civic and Theological Discourse / Democracy and the New Religious Pluralism. T. Banchoff (ed.). Oxford: Oxford UP, 2007. P. 243-270, Religious Pluralism: Framing Religious Diversity in the Contemporary World. G. Giordan and E. Pace (eds.). New York: Springer, 2014, Huber, S., Ketola, K., Traunmuller, R. Religious Diversity and Religious Vitality: New Measuring Strategies and Empirical Evidence // Interdisciplinary Journal of Research on Religion, 2013. Vol. 9; Huber, S., Huber, O. The Centrality of Religiosity Scale. // Religions, 2012. Vol. 3, Алексеев С. В., Королев А. А. Новые религиозные движения. М., 2011, Тощенко Ж.Т. Теократия: фантом или реальность. М., 2007, Атанесян, А. В., Актуальные проблемы современных политических и конфликтных коммуникаций. Ер., 2008, Мкртичян А. Е., Хаос как системообразующий механизм самоорганизации социума. Ер., 2008* և ուրիշներ:

9. Անհասկանալի է նաև ատենախոսության եզրակացությունները, որոնցից այդպես էլ պարզ չի դառնում հեղինակային մոտեցումն ու եզրահանգումները: Ատենախոսության եզրակացության բովանդակությունից տպավորություն է ստեղծվում, որ այն նախորդ ենթագլխի տեքստի շարունակությունն է (էջ 294-301):

10. Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակն ատենախոսության գրականության ցանկում կատարեր մենագրությունների, հոդվածների և աշխատությունների դասակարգում (էջ 302-341):

Ելնելով վերոշարադրյալից, գտնում եմ, որ **Հրաչյա Վաղարշակի Արզումանյանի «Քաղաքագիտական-աստվածաբանական տեղաշարժի հարացույցը ազգային անվտանգության տեսության զարգացման մեջ»** (Парадигма политолого-теологического сдвига в развитии теории национальной безопасности) թեմայով՝ ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ, քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը չի համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 8-րդ կետի պահանջներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ, քաղ. գիտ. դոկտոր՝ Աշոտ Ալեքսանյան

Քաղ. գիտ. դոկտ., դոց. Ա. Ս. Ալեքսանյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար,
պատմ. գիտ. թեկնածու՝ Լ. Ս. Հովսեփյան

ք. Երևան, 11 հուլիսի 2020 թ.